

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՂԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՂԱՍԱԼՍԱՐԱՆ**

**ՖԱՐՋԱԴՅԱՆ ՀՈՒՓՍԻՄԵ ՌՈՒԲԵՆԻ**

**ԴԵՇԱՐԱՍ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՄՈՈՂ ԴՐՈԱՊԱՏճԱՌՈՆՆԵՐԸ ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցնան ատենախոսության**

**Ս Ե Դ Ս Ա Գ Ի Ր**

**Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:**

**Գիտական դեկանավար՝**

**Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Ս. Մանուկյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

**Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ի.Կ. Կարապետյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

**Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. մարտի 27-ին ժամը 14<sup>00</sup>-ին Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

**Սեղմագիրն առաքված է 2014 թ.-ի փետրվարի 27-ին:**

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա.Յ.Սվաջյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՍ ԸՆԴԱՍՈՒԻՌ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Արդի կորթական համակարգը պահանջում է դաստիարակել միցունակ, ազատ շովայական հարաբերություններում հաղորդակցական, հաճրամշակութային արժեքներ ստեղծող և պահպանող, տարրեր արտադրական, հասարակական հարաբերություններում ճիշտ կողմնորոշվող անձ:

Մանկավարժական գործունեության գլխավոր նպատակներից է սովորողներին ամբողջական գիտելիքներ տալը, նրանց ճանաչողական, սոցիալական և անհատական կարողություններն ու հմտությունները ձևավորելն ու զարգացնելը, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի դաստիարակելը, նրանց անձնային որակները բացահայտելը և սեփական ներուժին համապատասխան ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մեջ նաև նաև ակտիվ անձ և քաղաքացի դաստիարակելը, նրանց անձնային որակները բացահայտելը և սեփական ներուժին համապատասխան ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մեջ նաև ակտիվ անձ և քաղաքացի պատմության, ավանդությունների և ազգային առանձնահատկությունների նկատմամբ սովորողի հարգանքն ու հպարտությունը ամրապնդելը: Սակայն այսօր առավել կարևոր է դառնում նրանց ստեղծագործող անձի ձևավորման գործընթացի նպատակադրված, համակարգված և արդյունավետ դեկավարումը, ինչը կօգնի նրանց առավել զարգացնել և նախապատրաստել հիմնական սոցիալական գործառույթներ կատարելուն: Ստեղծագործական գործունեությունն օգնում է սովորողն ճանաչել ինքն իրեն, ժամանակակից աշխարհը, կողմնորոշվել հասարակական բազմաբնույթ հարաբերություններում, ամբողջական պատկերացում ունենալ Դայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ:

Ստեղծագործական գործունեության կազմակերպման և ընթացքի օրինաչափությունների ճանաչողության և գործնական իրականացման հիմնախնդիրը դաստիարակության և այլ գիտությունների ուսումնասիրման հիմնական ուղղություններից է:

Նաև է նշել, որ այս հիմնախնդիրի շրջանակներում առավել կարևորվում է տարիքային առանձնահատկությունների հաշվի առնելը, քանի որ յուրաքանչյուր տարիքի համար գոյություն ունեն ստեղծագործական գործունեության հատուկ միջոցներ, դրապատճառների ձևավորման որոշակի պայմաններ և առանձնահատկություններ: Արվեստի և գիտության պատմությունից հայտնի է, որ դեռահասությանը տարիքը, լինելով ճգնաժանային, նախատում է ստեղծագործական մտքի զարգացմանը, քանի որ այն կարող է հնչել դրական, այնպես էլ բացասական անդրադառնալ դեռահասի ստեղծագործական ներուժի զարգացման և կայացման վրա:

Արդի ժամանակաշրջանում դպրոցականների ստեղծագործական գործունեության կազմակերպման, ստեղծագործական ընդունակությունների զարգացնան հիմնախնդիրը դպրոցի կարևորագույն խնդիրներից է: Այս հիմնախնդիրն նվիրված մոտեցումները արտացոլված են Լ.Թ. Ասատրյանի, Ժ.Ս. Գրիգորյանի, Լ.Ս. Ներսիսյանի, Գ. Պ. Դովակիմյանի, Դ.Բ. Բոգոյավլենսկայայի, Մ.Ն. Սկատկինի, Ա.Ս. Մատյուշկինի, Լ. Ս. Յ.Պ. Ազարովի, Վ.Յ. Վիլեմկինի, Ն.Վ. Կուգմինայի, Ն.Ռ. Նիկանդրովի, Ա.Ի. Շերբակովի, և այլոց աշխատություններում:

Գիտնականների մի մասը գտնում է, որ ստեղծագործական ընդունակությունների ձևավորման գործընթացում մեծ դեր են խաղում

դրդապատճառները, արժեքները և անձնային որակները (Դ.Վ. Մակվիոն, Ա. Մասլու, Ա. Օլլիխ, Է. Ֆրոն, Ա. Կանենբաում, Դ. Գիլֆորդ և այլք):

Հետազոտության հիմքում ընկած են ընդունակությունների (Ս.Լ. Ռուբինշտեյն, Բ.Ս. Տեղլով, Վ.Դ. Շչադրիկով և այլք), գործունեության և անձի ձևավորման (Տ.Վ. Կուդրյավցև, Ա.Մ. Մատյուչկին, Ս.Լ. Ռուբինշտեյն, Վ.Ն. Սոկոլով և այլք), անձի պահանջնումների զարգացման (Պ.Վ. Սիմոնով, Զ.Ի. Ռավիխն, Ա.Ն. Լենոնս և այլք), շնորհալիության (Ա. Բինե, Ու. Շտերն, Գ. Այզենկ, Զ. Գիլֆորդ, Բ.Ս. Տեղլով, Ն.Ս. Լեյսու, Վ.Դ. Ներիլիշին, Ե.Ա. Գոլուբևա, Վ.Ա. Կրուտեցի, Վ.Դ. Շչադրիկով, Վ.Ն. Դրուժինին և այլք) հետազոտությունները:

Արդիականությունը և ՅՅ հանրակրության զարգացման միտումները հնարավորություն տվեցին ձևակերպել հետազոտության **հիմնախնդիրը**. Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող առավել արդյունավետ դրդապատճառների հիմնախնդիրի ուսումնասիրումը հումանիստական դաստիարակության պայմաններում:

Հետազոտության **նպատակն** է տեսականորեն հիմնավորել և գործնականում կիրառել դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման առավել արդյունավետ մանկավարժական պայմանները հիմնական դպրոցում:

Հետազոտության **օբյեկտն** է ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման գործընթացը դպրոցում:

Հետազոտության **առարկան՝** դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մանկավարժական պայմանները հումանիստական դաստիարակության գործընթացում:

Հետազոտության **հիմքում ընկած է** այն վարկածը, որի համաձայն, դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման գործունեության մղող դրդապատճառների ձևավորման պայմանները հումանիստական դաստիարակության երե՝

✓ դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման գործընթացը հիմնվի հումանիստական մանկավարժության ոլորտում կատարված արտասահմանյան, ռուս և հայ գիտնականների հետազոտությունների և անձնակողմնորոշչի կրթության սկզբունքների վրա,

✓ նշակվի դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մողելը,

✓ իրականացվի դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման ամենդիատ մոնիթորինգ:

Նպատակին, օբյեկտին, առարկային և վարկածին համապատասխան դրվել են հետազոտության **խնդիրները**.

1. Ուսումնասիրել դաստիարակության պայմաններում դեռահաս պրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների հիմնախնդիրը արտերկրում և Յայաստանում, վերլուծել հետազոտության կարևորագույն հասկացությունները՝ «ստեղծագործություն», «ստեղծագործական գործունեություն», «դրդապատճառներ», «հումանիստական դաստիարակություն»:

2. Դիտարկել դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման գործընթացը հումանիստական դաստիարակության պայմաններում:

3. Մշակել դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մոլոր դրդապատճառների ձևավորման մողելը:

4. Որոշել դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մոլոր դրդապատճառների ձևավորման մակարդակը, ախտորշման չափանիշները և ցուցանիշները:

5. Անցկացնել գիտափորձ՝ դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մոլոր դրդապատճառների ձևավորման մանկավարժական պայմանների արդյունավետությունը ստուգելու նպատակով:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել.

✓ ստեղծագործության երևույթը ուսումնասիրող փիլիսոփայական (Լ. Ֆեյերպահ, Կ. Յունգ, Մ. Շայլեգեր, Ժ. Սարտր, Ն.Ա. Բերդյակ, Վ.Ա. Սոլովյով, Մ.Մ. Բախտին, Պ.Ն. Լավրով, Ա.Գ. Սպիրկին), հոգեբենական (Վ. Ֆրանկլ, Ա.Գ. Մասլով, Լ.Ս. Վիգոսկի, Վ.Ա. Շուրինցիկի, Զ. Գիլֆորդ, Ե.Պ. Տորթենս և այլոք),

✓ ստեղծագործական գործունեության հիմնախնդիրն ուսումնասիրող հոգեբանական և մանկավարժական հետազոտությունները (Ռ. Շոլլմեն, Վ.Վ. Շարոնով, Ի.Յ. Լերներ, Ս.Լ. Դյուկով և այլոք) տեսությունները,

✓ դրդապատճառների և դրանց դասակարգման առանձնահատկություններին և ձևերին նվիրված աշխատությունները (Ա.Գ. Մասլով, Ս.Տ. Շացկի, Պ.Ս. Յակոբսոն, Յ. Մյուլեր, Ու. Մակ-Դաունոլ, Մ.Ի. Կովայով, Գ.Ի. Իվանով),

✓ հումանիստական դաստիարակության հայեցակարգային մոտեցումներն ուսումնասիրող արտասահմանյան և հայրենական գիտնականների աշխատությունները (Ա. Օ. Թոփուզյան, Գ.Ե. Ղույումյան, Ե.Վ. Բոնդարևսկայա, Ս.Վ. Կովլենիչ, Ա.Վ. Մուլդիկ, Վ.Ա. Սլաստենին, Վ.Վ. Սերիկով, Ի.Բ. Կոտորվա, Ե.Ն. Շիյանով, Ի.Ս. Յակիմանսկայա, և այլոք),

✓ ստեղծագործական ընդունակությունների՝ որպես ստեղծագործական գործունեության կարևորագույն բաղադրամասի ուսումնասիրմանը վերաբերող հոգեբանամանկավարժական ուսումնասիրությունները (Լ.Ս. Բոլշակովա, Օ.Ի. Մոտկով, Ս.Ս. Միխայլով, Դ.Բ. Բոգոյավլենսկայա, Ժ.Ս. Գրիգորյան և այլոք):

Առաջարված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետևյալ մեթոդներ՝

- **տեսական՝** փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, մանկավարժական գրականության վերլուծություն, հիմնախնդիրի վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումների համակարգում և ընդհանրացում, գիտական տեսության և դաստիարակչական պրակտիկայի միացում, մողելավորում:
- **հմայիրկ՝** մանկավարժական դիտում, անկետավորում, թեստավորում, հարցազրույց, մանկավարժական գիտափորձ հաստատող, ձևավորող և ամփոփող փուլերով, մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներով արդյունքների վերլուծություն:

Հետազոտության փորձարարական բազա են հանդիսացել Գյումրի քաղաքի թիվ 17, 40 դպրոցները և Ախուրյանի 1-ին դպրոցը:

Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2004-2006 թթ.) հիմնավորվել և իմաստավորվել է հետազոտության հիմնախնդիրը, ուսումնասիրվել և վերլուծվել է փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, գիտական, մանկավարժական գրականությունը, որոշվել է հետազոտության նախնական օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը և խնդիրները, մշակվել են դեռահաս դպրոցականներին

ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման սկզբունքները:

Երկրորդ փուլում (2006-2009 թթ.) կառուցվել է դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մոդելը, արժարժվել են մանկավարժական պայմանները, մշակվել են ախտորոշչ չափանիշներն ու ցուցանիշները, գիտափորձի անցկացման մեթոդիկան, անցկացվել են փորձաքննության հաստատող և ձևավորող փուլերը:

Երրորդ փուլում (2009-2010թթ.) մշակվել, ստուգվել, համեմատվել, համակարգվել և ընդհանրացվել են գիտափորձի արդյունքները, հաստատվել է արժարժակած մանկավարժական պայմանների և դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման գործընթացի մեթոդիկայի արդյունավետությունը, հիմնավորվել և ձևակերպվել են հետազոտության եզրակացությունները:

#### **Նետազոտության գիտական նորույթը.**

1. Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման գործընթացը ուսումնասիրվել է ճանաչողական-կառուցողական, մանկավարժական աջակցման /Փասիլիտացիա/ հայեցակարգերի տեսանկյունից, որը առավելագույնս է մապատում ինքնուրույն, գիտակից, ստեղծագործող, իր ճանաչողական գործընթացը կազմակերպող անձի ձևավորմանը և զարգացմանը:

2. Մշակվել է դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մոդելը, որի հիմքում ընկած են մանկավարժական աջակցման արժեքանական, ճանաչողական, հաղորդակցական մանկաարժեթյան հիմնական սկզբունքները:

3. Կումանիստական դաստիարակության տեսանկյունից ուսումնասիրվել և ներկայացվել են դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման պայմանները, մակարդակներն ու չափանիշները:

#### **Նետազոտության տեսական մշանակությունը այն է, որ**

✓ դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառները դիտարկված են դաստիարակության հումանիստական հարացույցի շրջանակներում, իսկ այդ գործընթացը հիմնված է մարդասիրացման, ինքնակազմակերպման, երկխոսության, ուսուցման և ստեղծագործության միասնության, ապրումակցման սկզբունքների վրա,

✓ մշակված է դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մոդելը, որը ներառում է ճանաչողական, հաղորդակցական, արժեքանական և գեղագիտական բաղադրանասերը,

✓ բացահայտված է դեռահաս դպրոցականների ստեղծագործական գործունեության և անձին գործունեության մղող արդյունավետ դրդապատճառների ձևավորման գաղափարների միջև փոխադարձ կապը:

#### **Նետազոտության գործնական մշանակությունը.**

✓ մշակվել և գիտափորձով հաստատվել է դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մանկավարժական պայմանների արդյունավետությունը,

✓ մշակված գործնական հանձնարարականները, դասերի անցկացման ժամանակակից ձևերը, ախտորոշչ մեթոդիկաները կմպաստեն

հանրակրթական դպրոցներում դեռահաս դպրոցականների ստեղծագործական գործունեության առավել արդյունավետ կազմակերպմանը և ուսումնական նյութի ավելի դյուրիհ և հետաքրքի մատուցմանը և ընկալմանը:

### **Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.**

1. Հունանիստական դաստիարակության հայեցակարգի շրջանակներում «ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառներ» հասկացությունը, որը դիտարկվում է որպես որակապես նորի, մինչ այդ գոյություն չունեցող սուբյեկտիվ արժեքների ստեղծման գործնթաց, պայմանավորված է անձի գործունեության և վարքի առանձնահատուկ գիտակցված մոլումներով, ուղղված է բավարարելու նրա ինքնադրսուրման, որևէ բանի (փառքի, ճանաչման, հարգանքի և այլնի) հասնելու, արժեքային կողմնորոշումների, ճանաչողական, հաղորդակցման, շփվելու, հետաքրքրասիրության ապահովման, ինքնուրույնության, քննադատական մտածողության ձգումներուն ու պահանջնումներուն:

2. Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ծևավորման մոլեմը, որը ներառում է նպատակ, բաղադրամասեր (ճանաչողական, հաղորդակցական, արժեքանական, գեղագիտական), սկզբունքներ (մանկավարժական աջակցման, ինքնախրացման, ինքնակազմակերպման, դրական օգացմունքների ստեղծման, գիտելիքների նկատմամբ վերաբերմունքի փոփոխման), մեթոդներ (ինտերակտիվ, անձնակողմնորոշչի, խաղային), մանկավարժական պայմաններ և արդյունք:

3. Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ծևավորման առավել արդյունավետ մանկավարժական պայմաններուն:

✓ դպրոցի հունանիստական կողմնորոշված, ստեղծագործական, դիդակտիկ-հաղորդակցային միջավայրի ստեղծումը, որը կնպաստի աշակերտների և ուսուցիչների ինքնազարգացմանը և ինքնախրացմանը և հիմնված կլինի հունանիստական և երկխոսության սկզբունքների վրա,

✓ կրթության բովանդակության մեջ պրոբլեմային ստեղծագործական խնդիրների ներառումը, որը նպաստում է տարրերի և հասկացությունների ոչ ստանարդ, ոչ շաբլոնային համակցմանը, արդեն հայտնի մեջ պրոբլեմ գտնելու, նորի նկատմամբ բաց լինելու կարողության զարգացմանը,

✓ ներքին ինքնազմահատման զարգացման ուղղվածությունը, որը ի հայտ է զալիս սեփական «Ես»-ը և ներքին կարողությունները զգալով և զարգանում է նոտավոր, զգացմունքային, կամային, դրդապատճառաշային անձնային համակարգերի ակտիվացմանը:

**Նետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունն երաշխավորվում են հիմնախնդրի՝ բնագավառում առկա փիլիսոփայական, սոցիալիզմերանական և մանկավարժական գրականության և մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության գիտատեսական բազայով, առաջադրված օբյեկտին, առարկային, նպատակին, խնդիրներին և հետազոտության տրամաբանությանը համարժեք հետազոտական մեթոդների կիրառմամբ, մանկավարժական գիտափորձի տևական բնույթով, ստացված արդյունքների վերլուծությամբ, ընդհանրացմամբ, հետազոտության արդյունքների մշակման մաթեմատիկական ժամանակակից մեթոդների կիրառմամբ, ստացված տվյալների, եզրակացությունների, հանձնարարական-ների հիմնավորմամբ:**

**Նետազոտության փորձաքննությունն իրականացել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Գյումրու Ս. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ ընդհանուր մանկավարժության ամբիոնների նիստերում, իրատարակված գիտական հոդվածներում, գիտափորձի բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում:**

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երկու գլխից, եղրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնավորվել է հիմնախնդրի իրատապությունը, բացահայտվել է նրա մշակվածության աստիճանը, որոշվել են նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները, ծևակերպվել է աշխատանքային վարկածը: Ներկայացվել են հետազոտության մեթոդաբանական աղյուսները, մեթոդիկան, նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխի՝ «**Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը» առաջին ենթագլխում Ստեղծագործական գործունեությունը դիտարկված է որպես հոգեբանական և մանկավարժական հիմնախնդրի:**

Հիմնավորված է, որ ստեղծագործական գործունեության՝ որպես գիտական հիմնախնդրի ուսումնասիրումը կարևոր է անձի ամբողջականությունը, նրա ստեղծագործական ներուժի զարգացման մեխանիզմները և տարրեր ոլորտներում ինքնակողմնորոշման ձգույթները հասկանալու համար: Ստեղծագործական անհատականության զարգացման և անձի ստեղծագործական գործունեության հիմնախնդիրը շատ գիտությունների, այդ թվում և փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության հետազոտության առարկա են դարձել: Ստեղծագործության երևույթը ավելի երկար պատճական զարգացում է ապրել, հետազոտվել է տարրեր գիտականների կողմից (Լ. Ֆեյերպախ, Կ. Յունգ, Մ. Յայնեգեր, Ժ. Սարտր, Ն.Ա. Բերյաև, Ս.Ս. Բախտին, Պ.Ն. Լավրով, Ա.Գ. Սայրիկին, Վ. Ֆրանկլ, Ա.Գ. Մասլով, Լ.Ս. Վիգոտսկի, Զ. Գիլֆորդ, Ե.Պ. Տորբենս, Դ.Բ. Բոգոյավլենսկայա, Յա.Ա. Պոնոմարյով):

Նախ և առաջ պետք է նշել, որ ժամանակակից հասարակական գիտություններում մշակվել և լայնորեն օգտագործվում են «ստեղծագործություն» և «կրեատիվություն» հասկացությունները, որոնք հայերեն թարգմանության ժամանակ հաճախ կիրառվում են միևնույն նշանակությամբ: Մանկավարժական հանրագիտարանում «ստեղծագործություն» հասկացությունը դիտարկվում է որպես գործունեություն, որի արդյունքում ստեղծվում են նոր, օրիգինալ, ավելի կատարյալ նյութական կամ հոգևոր արժեքներ, որոնք ունեն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ նշանակություն: Այդ նոյն համրագիտարանում կրեատիվությունը դիտարկվում է որպես ստեղծագործական կարողություններ, որոնք կարող են ի հայտ գալ մտածողության, զգացմունքների, շփման, գործունեության տարրեր ծննդրում, դա-

ոչ ստանդարտ պայմաններում նոր բազմազան օրիգինալ գաղափարներ ծնելու կարողություն:

«Կրեատիվություն» և «ստեղծագործություն» հասկացությունները առաջին անգամ սկսեցին տարբերակել 20-րդ դարի 50-ական թվականներին, երբ ձգտում առաջացավ առանձնացնել ստեղծագործությունը որպես յուրօրինակ ընդունակություն: Եթե մինչ այդ ձգտում կար կրեատիվությունը կապէլ մարդու նոտավոր կարողությունների հետ, ապա բազմաթիվ հետազոտությունների արդյունքում գիտնականները եկան այն եզրակացության, որ նոտավոր ընդունակությունների տեր նարդը պարտադիր է, որ լինի ստեղծագործող և ընդհակառակը, ավելի քիչ նոտավոր կարողություններ և ընդունակություններ ունեցող անձը կարող է ստեղծագործող լինի: Առաջին անգամ կրեատիվությունը որպես ինքնուրույն ստեղծագործական ընդունակություն բացատրեց Զ. Գիլֆորդը, որը խոսեց երկու տիպի նոտածողության մասին. միտուի (կոնվերգենտ), որն անհրաժեշտ է միակ ճիշտ որոշումն ընդունելու համար, և բազմութի (դիվերգենտ), որն դիտարկում է միևնույն խնդրի լուծնան տարրեր տեսակետներ, որը հնարավորություն է տալիս հանգել անակնկալ եզրակացությունների և արդյունքների: Զ Գիլֆորդը կոնվերգենտ նոտածողության ընդունակությունը նույնացնում է նոտավոր կարողությունների հետ, իսկ դիվերգենտ նոտածողությունը կրեատիվության հետ և այն ընդհանուր ստեղծագործական ընդունակության հիմք էր համարում:

Այսպիսով, Զ. Գիլֆորդը բնորոշում է կրեատիվությունը որպես ունիվերսալ կարողություն, որը նպաստում է ստեղծագործական նոտածողությանը:

Ի մի բերելով հետազոտած ողջ գրականությունը եզրակացնում է արվում այն մասին, որ ստեղծագործական գործունեությունը դա ստեղծագործող անձին բնորոշ բարդ և բազմակողմանի գործընթաց է, սովորողի անձնային զարգացման պարտադիր պայման, անկախ այն բանից, այդ գործունեության արդյունքում կզարգանա սովորողի բնածին օժտվածությունը և շնորհալիությունը թե ոչ: Այդ գործունեության ընթացքում զարգանում են ստեղծագործական մոտածողությունը և ստեղծագործական ընդունակությունը, բավարարվում են ստեղծագործական պահանջմունքները:

Դեռահաս դպրոցականների ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների զարգացման տեսանկյունից կարող է այն, որ այդ գործընթացն առավել նպատակահարմար է իրականացնել հումանիստական մանկավարժության շրջանակներում: Հումանիստական մանկավարժության նվազումներից մեկն այն է, որ այն իհմնավորեց ինքնուրույն, գիտակից, ստեղծագործող անձի գաղափարը, որտեղ առաջին պլան նկվեց ինքնազարգացող, ինքնիրացնող, ինքնորոշվող երեխա, ով կգիտակեր ինքնազարգացման, ինքնադաստիարության եռթյունը և կկարենորեր այն:

Առաջին գլխի երկրորդ ենթակայում՝ «Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառները հումանիստական դաստիարակության պայմաններուն» դեռահաս դպրոցականներն ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառները դիտարկված են հումանիստական դաստիարակության պայմաններում: Ենթակայությունը նպատակահարմար էնք համարում ուսումնասիրել հումանիստական դաստիարակության եռթյունը և ներկայացնել ավանդական և անձնակողմնորոշիչ կրթական հանակարգերի համեմատական վերլուծությունը:

Ընդհանուր առմանք, կարելի է խոսել ժամանակակից կրթության երկու հիմնական հարացույցների նաևին՝ ծևավորող (ավանդական) և անձնակողմնորոշչի (հումանիստական), որոնցից յուրաքանչյուրին բնորոշ է միայն իրեն հատուկ նպատակ, բովանդակություն, ուսուցման և դաստիարակության գործընթաց:

Այս ենթագլխում դիտարկված են նաև դրդապատճառները, որոնք խթանիչ հզոր ուժ են հանդիսանում ստեղծագործական գործունեության համար:

**Առաջին գլխի երրորդ ենթագլխում** «Դեռահաս դպրոցականների ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների դասակարգումը», տրված են մի շարք գիտնականների (Պ.Ս. Յակոբսոն, Ա. Մասլու, Յ. Մյուրեր, Ու. Մակ-Դաուդոլ, Մ.Ի. Կովայով, Ս.Լ. Շյուկով, Գ.Ի. Իվանով) կողմից մշակած դրդապատճառների տարրեր դասակարգումներ:

Մեր կողմից առանձնացվել են ստեղծագործական գործունեության մղող հետևյալ դրդապատճառները. ինքնադրսուրման, արժեքային կողմնորոշումների, ճանաչողական, հաղորդակցման, շփվելու, հետաքրքրասիրության ապահովման, ինքնուրույնության, քննադատական մտածողության ձգտումներն ու պահանջմունքները:

Առաջին գլխի վերջում բացահայտել ենք ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառներ հասկացության մեր մեկնաբառնումը, այն է. որակապես նորի, մինչ այդ գոյություն չունեցող սուրյեկտիվ արժեքների ստեղծման գործընթաց, որը պայմանավորված է անձի գործունեության և վարքի առանձնահատուկ գիտակցված մղումներով, ուղղված է բավարարելու նրա ինքնադրսուրման, որևէ բանի (փառքի, ճանաչման, հարգանքի և այլնի) հասնելու, արժեքային կողմնորոշումների, ճանաչողական, հաղորդակցման, շփվելու, հետաքրքրասիրության ապահովման, ինքնուրույնության, քննադատական մտածողության ձգտումներն ու պահանջմունքները:

**Ավելախսության երրորդ՝ «Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ծևավորման մանկավարժական պայմանները»** կրող գլխի առաջին ենթագլխում տրված է դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ծևավորման մողելի կառուցվածքը:

Նպատակաւողված գործընթացը, հետազոտված նյութի ընդհանրացումը թույլ տվեցին որոշել դեռահասների հետ մանկավարժական աշխատանքի եւթյունը, իմաստավորել դրդապատճառների դասակարգումը, նախագծել հետազա աշխատանքները, տեսական գիտելիքները գործնականում ներդնելու պայմանները: Առաջին գլխում վելուրծած տեսական դրույթները թույլ տվեցին նշակել դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ծևավորման մողելը՝ հիմնված հումանիստական անձնակողմնորոշչի դաստիարակության սկզբունքների և հայեցակետային դրույթների վրա:


Մեր հետազոտության մեջ դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ծևավորման մողելը (Ակար 1) հանդես է գալիս որպես փոխապակցված տարրերի բարդ համակարգ և ներառու է նպատակ, սկզբունքներ, մեթոդներ, բաղադրանասեր, մանկավարժական պայմաններ, չափանիշներ և արդյունք:

Դրդապատճառների ծևավորումը ստեղծագործական գործունեության ընթացքում մեր կողմից դիտարկվում է որպես աշակերտի բազմաֆունկցիոնալ գործունեություն և հիմնվում է ճանաչողական, հաղորդակցական, արժեքանական և գեղագիտական մոտեցումների վրա:

Մողելի նպատակն է դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորումը որպես նրանց ստեղծագործական ինքնահրագործնան նախադրյալ:

Ներահաս դպրոցականների ստեղծագործական գործունեության մողով դրդապատճառների ձևավորվածությունը ենթադրում է ստեղծագործական մտածողության, ընդունակությունների և պահանջմունքների ներդաշնակ զարգացման այնպիսի մակարդակ, որը թույլ կտա նրանց դառնալու ուսումնառության ակտիվացման գործընթացի և կենսագործունեության ակտիվ անդամ: Դրված նպատակին հասնելու հիմնվում է որոշակի սկզբունքների վրա և պահանջում է այնպիսի մեթոդների, պայմանների նշակում և կրթադաստիհարակչական գործընթացում ներդրում, որոնք կնպաստեն վերը ներկայացված դրդապատճառների ձևավորմանը: Մեր կողմից առանձնացվել են հետևյալ սկզբունքները. մարդասիրացման, ինքնակազմակերպման, երկխոսության, ինտեգրման, ուսուցման և ստեղծագործության միասնության, ապրումակցման:

**Նկար 1. Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մոդուլ դրավագատնականների ձևավորման տեսական մոդելը**



Ղեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մողելի արդյունավետությունը պայմանավորված է հատուկ ստեղծված մանկավարժական պայմաններով:

Մեր հետազոտության մեջ մանկավարժական պայմաններ ասելով հասկանում ենք ուսուցչի կողմից նպատակաուղղված օգտագործվող կրթական գործընթացի օբյելտիվ հնարավորություններ և հատուկ կազմակերպած գործոններ և իրավիճակներ, որոնք նպաստում են ղեռահասների ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորմանը:

Որպես այդպիսի պայմաններ մեր կողմից առանձնացվել են.

✓ դպրոցի հումանիստական կողմնորոշված, ստեղծագործական, ուսուցողական-հաղորդակցական միջավայրի ստեղծումը, որը կնպաստի աշակերտների և ուսուցիչների ինքնազարգացմանը և ինքնախրագործմանը և ինքնված կլինի հումանիստական և երկխոսության սկզբունքների վրա,

✓ կրթության բովանդակության մեջ պրոբլեմային ստեղծագործական խնդիրների ներառումը, որը նպաստում է տարրերի և հասկացությունների ոչ ստանդարտ, ոչ շարլոնային համակցմանը, արդեն հայտնի մեջ պրոբլեմ գտնելու, նորի նկատմամբ բաց լինելու կարողությանը,

✓ ներքին ինքնազմնահատման զարգացման ուղղվածությունը, որը ի հայտ է զալիս սեփական «ես»-ը և ներքին կարողությունները զգալով և զարգանում է մտավոր, զգացմունքային, կանային, դրդապատճառային անձնային համակարգերի ակտիվացմամբ:

Որոշելով ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մողելի նպատակը, սկզբունքները, բաղադրամասերը դիտարկենք մեթոդները, որոնք պետք է համապատասխաննեն անձնակողմնորոշչի կրթական հարցույցին, իմանվեն ժամանակակից կրթության բովանդակություն վրա:

Ստեղծագործական գործունեության պահանջներին համապատասխանող ուսուցման մեթոդների որոնումը, որտեղ ուսուցիչը և աշակերտը հանդես են գալիս որպես համատեղ գործունեության մասնակից լիիրավ անդամներ, դրդեցին ուսումնասիրել ուսուցման մեթոդների դասակարգումը:

Մեր հետազոտության շրջանակներում մեթոդների ընտրության հարցում նոյնական իմանվել ենք վերը նշված ընկալման, տրամաբանական և իմացարանական մեթոդների ամբողջության զաղափարի վրա: Դրանք են. ինտերակտիվ, անձնակողմնորոշչի, խառային մեթոդները:

Այսպիսով, ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մողելը իրենից ներկայացնում է դիմանիկ համակարգ: Սոդելը ներառում է ծանաչողական, հաղորդակցական, արժեքանական և գեղագիտական նոտեցումները, նպատակը դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորումը որպես նրանց ստեղծագործական ինքնախրացման պայման: Սոդելը իմանվում է անձնակողմնորոշչի հունանիստական դաստիարակության սկզբունքների վրա, ապահովում է անձի ազատ, համակողմանի զարգացումը կրթադաստիարակչական գործընթացում:

Երկրորդ ենթագլխում՝ «Ղեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման չափանիշները և մակարդակները», ներկայացված է կատարված մանկավարժական գիտափորձը:

Առաջադրված խնդիրները լուծվել են 7 տարիների ընթացքում, 2004-ից մինչև 2011 թթ. դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում:

Փորձաքննության կազմակերպման և անցկացման բազա են հանդիսացել Գյումրի քաղաքի 17, 40 հայրոցները և Ախուրյանի 1 հայրոց:

Մշակված մողելը և ընտրված մանկավարժական պայմանները որոշեցին հետազոտության չափանիշների ընտրությունը, որոնք դիտարկվում են որպես հատկանիշ, թույլ են տալիս գնահատել ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մակարդակը: Ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման չափանիշներն են՝ ճանաչողական, ակնելոգիական-ստեղծագործական, դրդապատճառային-արժեքային:

Ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մակարդակի ստուգման համար մշակվել է հատուկ ախտորոշիչ մեթոդիկա, որը ներառում է.

1. Ընդհանուր դիդակտիկական մեթոդներ՝ դիտում, գրույց, անկետավորում, թեսթավորում:

2. Դիագնոստիկ մեթոդիկաներ, «Անձի լյանքի արժեքները որոշող Must – թեսքը» (Պ.Տ. Իվանով, Ե.Ֆ. Կոլորովա), «Անձի ստեղծագործական ներուժը» և Մ. Ռոկիշի «Արժեքային կողմնորոշումները»:

3. Հատուկ մշակված հեղինակային մեթոդիկաներ. «Գիտե՞ք արդյոք», «Վերլուծիր», «Ձեկույց-ցուցադրում»:

Մշակված ախտորոշիչ մեթոդիկաների արդյունքները մեկնաբանելու համար առանձնացվեցին 3 մակարդակ՝ բարձր, միջին, ցածր:

Այսպիսով, չափանիշների սահմանումը թույլ տվեց ստուգել դեռահաս դպրոցականների ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մակարդակը գիտափորձի հաստատող փուլում, ապա իրականացնել ձևավորող գիտափորձ, որից հետո անցկացնել ևս մեկ ախտորոշում, ապա՝ վերլուծել, համեմատել և մեկնաբանել հաստատող և արձանագրող փուլերի արդյունքները:

**Երրորդ ենթագում՝ «Փորձարարական աշխատանքների արդյունավետության գնահատումը»** կատարվել է գիտափորձի հաստատող և արձանագրող փուլերի արդյունքների համեմատական վերլուծություն:

Զևսփորող գիտափորձն անցկավել է Գյումրի քաղաքի 17 հայրոցում և Ախուրյանի 1 հայրոցում: Ուսումնական պլանի սահմաններում մշակվել են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներով դասերի անցկացման թեմաներ: Բացի ուսումնական գործունեությունից հատուկ ուշադրություն է դարձվել աշակերտների արտադրումնական գործունեությանը, բարոյագեղագիտական և հայրենասիրական դաստիարակությանը: Դեռահասները հաճախել են Գյումրի քաղաքի Վարդան Աճեմյանի անվ. պետական դրամատիկական թատրոն, Ավ. Խանհակյանի, Յ. Շիրազի, Մ. Սկրիչյանի տուն-թանգարանները, ինչպես նաև Եղել են Երեվան քաղաքում՝ Ղայաստանի պատմության թանգարանում և Ղայաստանի ազգային պատկերասրահում:

Ինչ վերաբերում է դասարանական պարապմնունքներին, ապա դրանք, ինչպես արդեն վերը նշել ենք, մշակվել և իրականացվել են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործմամբ: Առարկայական ուսուցիչների, դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և հոգեբանների հետ քննարկումներից հետո մեր կողմից ընտրվել և օգտագործվել են դասերի անցկացման հետևյալ մանկավարժական տեխնոլոգիաները. խաղային, պրոբլեմային, տեղեկատվական-համակարգչային:

Զեավիրող գիտափորձի անցկացման համար թեմատիկ դասընթացներ մշակելու նպատակով ուսումնասիրվել են 5-9 դասարանների «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հայ գրականություն», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Թրաքիֆրինգի», «Սեռական առողջություն» առարկաների դասագրքերը և ուսուցչի ծեռնարկները:

Սույն ուսումնասիրության արդյունքում եկանք այն եզրակացության, որ դասագրքերը և ծեռնարկները կազմված են ինտերակտիվ փոխներգործուն (մեթոդների) կիրառմամբ: Գրեթե բոլոր ուսումնական ծեռնարկներում մանրամասն ներկայացված են խնկ (խանում, ինաստավորում, կիրառում) համակարգը: Այս համակարգի էությունն այն է, որ այն ոչ միայն խանում է սովորողի մտածողությունը, այլև որոշակի հետաքրքրություն է առաջացնում կարդալու գործընթացի հանդեպ:

Փորձաքննությանը մասնակից խմբերում աշխատանքը ցույց տվեց, որ բոլոր ուսումնական նյութը ընկալելու և յուրացնելու գործընթացն ավելի արդյունավետ է լինում, եթե աշակերտների մոտ հնարավոր է լինում ձևավորել նրանց ինքնուրույն, որոնողական գործունեությունը խանում դրդապատճառները:

Գիտափորձի ավարտական փուլում ներկայացվել է մշտադիտարկման և ախտորշնան արդյունքները, կատարվել է գիտափորձի հաստատող և արձանագրող փուլերի արդյունքների համեմատական վերլուծություն՝ ըստ երեք չափանիշների, ինչպես նաև չափանիշների արդյունքների ընդհանրացում և վիճակագրական վերլուծություն:


Ըստ մշակված չափանիշների, ախտորշելով ստեղծագործական գործունեության նղող դրդապատճառների ձևավորնան մակարդակը և հիմնելով ձևավորող գիտափորձի ընթացքում անցկացրած մշտադիտարկման, զրոյցի արդյունքները հնարավորություն ընճեռեմել անել որոշ եզրակացությունների: Ստուգողական խմբում ներգրավված սովորողների մոտ նախ և առաջ գերակայում էր ունեցած մակարդակն ամրապնելու և հստակեցնելու միտունը, գրեթե բացակայում էր ստեղծագործական գործունեությանը զբաղվելու ձգուում, ստեղծագործական խնդիրների լուծումից խուսափելու, բազմաեղանակ որոշումների արկայության դեպքում սեփական տեսակետը ներկայացնելու և հիմնավորելու ցանկության և կարողությունների ի սպառ բացակայության միտունը, կարծրատիպերին գերակայություն տալը, սեփական գործողությունները պլանավորելու և դրանք իրականացնելու ձգտման բացակայությունը:

Փորձարարական խմբի արդյունքների վերլուծությունը թույլ տվեց փաստել, որ ձևավորող գիտափորձի ընթացքում դեռահաս դպրոցականները կարողանում են հարթահարել խորը անձնային հոլովական խնդիրները, վախը, սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը, լարվածությունը, ագրեսիվությունը, ինչը անտարակույս դրական էր անդրադառնում նրանց սոցիալականացման գործընթացի վրա: Պրոբլեմային քննարկումները, խաղերը թույլ տվեցին հաղթահարել ներքին կաշկանդվածությունը, ավելի հստակ և հիմնավորված ձևակերպել մտքերը, չվախենալ սխալվելուց, չանաչել ուրիշի սխալները ուղղելուց:

Այսպիսով, գիտափորձի եզրափակիչ փուլում անցկացված արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց տվեց հետևյալ պատկերը:

Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման չափանիշների ախտորոշման հանրագումարային արդյունքները

Մակարդակներ		Նաստ. փ.		Արձանագր. փ.	
		ստուգ. խ.	փորձ. խ.	ստուգ. խ.	փորձ. խ.
Բարձր	քան.	11	11	20	40
	%	11,5	11,5	20,8	41,7
Միջին	քան.	44	43	54	43
	%	45,8	44,8	56,2	44,8
Ցածր	քան.	41	42	22	13
	%	42,7	43,7	23	13,5



Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման չափանիշների հանրագումարային արդյունքները հաստատող և արձանագրող փուլերում

Այսպիսով, հանրագումարային արդյունքների վերլուծությունը ցույց տվեց հետևյալ պատկերը.

1. Բարձր մակարդակ. ստուգողական խմբի արդյունքները արձանագրող փուլում գերազանցում են հաստատող փուլի արդյունքները 9,3 %-ով, իսկ փորձարարական խմբինը՝ 30,2 %-ով:

2. միջին մակարդակ. ստուգողական խմբի արդյունքները արձանագրող փուլում գերազանցում են հաստատող փուլի արդյունքները 10,4 %-ով, իսկ փորձարարական խմբում արձանագրել ենք միևնույն տոկոսային մակարդակ և հաստատող, և՝ արձանագրող փուլերում:

3. ցածր մակարդակ. ստուգողական խմբի արդյունքները գիտափորձի արձանագրող փուլում նվազել են 19,7 %-ով, իսկ փորձարարական խմբինը՝ 30,2 %-ով:

Ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ փորձարարական խմբի դպրոցականները գիտափորձի վերջում ցույց տվեցին ստեղծագործական կարողությունների դրսարման և գործունեության մղող դրդապատճառների ձևավորվածության ավելի բարձր մակարդակ, քան ստուգողական խմբի աշակերտները, ինչը հաստատվեց ըստ երեք չափանիշների՝ ճանաչողական, ակմենոլոգիական-ստեղծագործական, դրդապատճառային-արժեքային:

Այսպիսով, այս ենթագլուխում ներկայացված գիտափորձի արդյունքները թույլ են տալիս մեծ հավանականությամբ փաստել, որ փորձարարական խմբերում նկատելի են դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորվածության մակարդակի զգալի դրական փոփոխություններ, ինչը մեկ անգամ և հավաստում է առաջադրված վարկածի ճշշտ ընտրությունը:

Նետագրությունն ապացուցեց վարկածի արդիականությունը և թույլ տվեց հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառներ ասելով հասկանում ենք որակապես նորի, մինչ այդ գոյություն չունեցող սուբյեկտիվ արժեքների ստեղծման գործընթաց, որը պայմանավորված է անձի գործունեության և վարքի առանձնահատուկ գիտակցված մղումներով, ուղղված է բավարարելու նրա ինքնադրսուրման, որևէ բանի (փառքի, ճանաչման, հարգանքի և այլնի) հասնելու, արժեքային կողմնարկությունների, ճանաչողական, հաղորդակցման, շիվելու, հետաքրքրասիրության ապահովման, ինքնուրույնության, քննադրատական մտածողության ձգուումներն ու պահանջմունքները:

2. Դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորումը դիդաստիկում է որպես նրանց ստեղծագործական անձի կայացման, նրանց ստեղծագործական ինքնակրագրումն նախադրյալ, իրականանում է հումանիստական անձնակողմնորոշչի դաստիարակության շրջանակներում, քանի որ այն առավել նպաստում է անձի լիարժեք զարգացմանը և ենթադրում է իրականությունը ինաստավորելու, սուբյեկտիվիտեն գնահատելու ընդունակությունը:

3. Մշակվել է դեռահասների միջնականությաին հաղորդակցության կարողությունների ձևավորման մոդելը՝ իիննված հումանիստական մանկավարժության սկզբունքների վրա, որի տրամարանական կառուցվածքը ներառուն է ճանաչողական, հաղորդակցական, արժեքանական և գեղագիտական մոտեցումները, նպատակը, մարդասիրացման, ինքնակազմակերպման, երկխոսության, ուսուցման և ստեղծագործության միասնության, ապրումակցման սկզբունքները, մանկավարժական պայմանները, զգացմունքային ընկալման, զուգորդման, խաղային, պրոբլեմային շարուրդման, ուսումնական քննարկումների մեթոդները և բերում է որոշակի արդյունքի, այն է՝ ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորված հստակ համակարգի:

4. Բացահայտվել են դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մակարդակները՝ բարձր, միջին, ցածր, ախտորոշման չափանիշները՝ ճանաչողական, ակնեղողիական-ստեղծագործական, դրդապատճառային-արժեքային:

5. Անցկացվել է գիտափորձ՝ դեռահաս դպրոցականներին ստեղծագործական գործունեության մղող դրդապատճառների ձևավորման մանկավարժական պայմանների արդյունավետությունը ստուգելու նպատակով։ Գիտափորձին մասնակից խմբերի ախտորոշման արդյունքների համեմատական վերլուծությունը արձանագրող փուլում ցույց տվեց, որ բարձր մակարդակում գիտափորձի արձանագրող փուլում ստուգողական խմբի արդյունքները գերազանցում են հաստատող փուլի արդյունքները 9,3 %-ով, իսկ փորձարարական խմբինը՝ 30,2 %-ով։

Անցկացված հետազոտությունը, անտարակույս, չի հավակնում լիարժեք և կատարյալ լինելու։ Այնուհանդերձ, հետազոտության արդյունքները կարող են արդյունավետորեն կիրառվել հանրակրթության ոլորտում, ինչպես նաև՝ հետագա ուսումնասիրությունների և մշակումների համար։

Հետազոտության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում։

1.Դեռահաս դպրոցականների գործունեության մղող մոտիվները անձի սոցիալական կենսադիրքորոշման պայմաններում ՀՀ մանկավարժանությունը՝ գերանական գիտությունների ակադեմիա (ՀԿ) Գիտական հոդվածների ժողովածու, 2007 Եջ128-132

2.Երեխսայի հոգեկան պահանջմունքների բավարարման առանձնահատ կությունները որպես նրա անձի սցահլական կողմնորոշման կարևոր գործոն «Միսիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Յասարակական գիտություններ 3 (19) 2008 Եջ 123-128

3.Դեռահաս դպրոցականների ստեղծագործական կարողողությունների զարգացնան ժամանակակից մոտցումները Սանկավարժություն գիտամեթոդական վերլուծական ամսագիր №8 2011 Եջ 27-31

## **ФАРЗАДЯН РИПСИМЕ РУБЕНОВНА**

### **МОТИВЫ, ПОБУЖДАЮЩИЕ К ТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПОДРОСТКОВ-ШКОЛЬНИКОВ В УСЛОВИЯХ ВОСПИТАНИЯ**

#### **РЕЗЮМЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 - "Теория и история педагогики"

Защита диссертации состоится 27-го марта 2014 г. в 14<sup>00</sup> на заседании специализированного совета по педагогике 020 "Педагогики" ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван. Ул. Тигран Меци 17.

**Актуальность исследования.** Современная образовательная система требует воспитывать конкурентоспособных личностей, которые в условиях свободных рыночных отношений, способны создать и сохранить социально-культурные ценности, правильно ориентироваться в различных производственных, социальных условиях.

Одна из основных целей педагогической деятельности является изменение отношения учащихся к процессу приобретения знаний, формирование и развитие познавательных, социальных и индивидуальных умений и навыков, воспитание социально активных граждан, раскрытие их личностных качеств, обеспечение их участие в трудовой и учебно-воспитательной деятельности, формирование и укрепление должного отношения к историческим, национальным ценностям данного народа. Однако сегодня приоритетной становится цель формирования креативной, творческой личности, целенаправленное и эффективное включение ее в жизнедеятельности общества.

Творческая деятельность помогает подросткам выполнять следующие функции: познать себя, современный мир, ориентироваться в разнородных социальных отношениях, иметь целостное представление о политических, экономических и духовно-культурных перспективах общества.

**Целью исследования** является теоретическое обоснование и практическое применение продуктивной модели формирования мотивов творческой деятельности в основной школе.

#### **Задачи исследования.**

1. Изучить проблемы формирования мотивов, побуждающих к творческой деятельности подростков в учебно-воспитательном процессе за рубежом и в РА, проанализировать важные понятия исследования: "творчество", "творческая деятельность", "мотивы" "гуманистическое воспитание"

2. Рассмотреть процесс формирования мотивов, побуждающих к творческой деятельности подростков в условиях воспитания.

3. Разработать модель формирования мотивов, побуждающих к творческой деятельности

4. Определить уровень формирования мотивов, побуждающих к творческой деятельности подростков, критерии и показатели диагностики.

5. Экспериментально обосновать эффективность педагогических условий формирования мотивов, побуждающих к творческой деятельности у подростков.

#### **Научная новизна исследования.**

Процесс формирования мотивов, побуждающих к творческой деятельности подростков был рассмотрен с точки зрения современной гуманистической концепции воспитания, которая максимально способствует формированию и развитию самостоятельной, сознательной, креативной личности. Разработана и внедрена модель формирования мотивов, побуждающих к творческой деятельности подростков.

В рамках концепции гуманистического воспитания в должной мере рассмотрены и содержательно представлены уровни и критерии формирования мотивов творческой деятельности подростков.

#### **Теоретическое значение исследования**

- Рассмотрены мотивы творческой деятельности подростков в гуманистической парадигме, в том плане, что этот процесс основывается на принципах гуманизации, самоорганизации, диалога, интеграции, обучения и единства творчества и эмпатии.
- Разработана модель формирования мотивов, побуждающих к творческой деятельности подростков, которая включает познавательные, акмеологические, валеологические и эстетические компоненты.
- Раскрыта обратная связь между творческой деятельности подростков и идеями формирования мотивов, побуждающих к творческой деятельности:

#### **Практическое значение исследования.**

Разработана и экспериментально обоснована модель формирования мотивов творческой деятельности подростков. Разработанные практические рекомендации, формы проведения уроков, диагностические методики будут способствовать более продуктивной организации творческой деятельности подростков-школьников и более легкому и интересному представлению и восприятию изучаемых явлений.

**Апробация результатов исследования.** Достоверность результатов исследования обеспечена комплексным анализом философской, социально-психологической и педагогической литературы и разработанных концепций, научно-теоретической базой, применением исследовательских методик в соответствии с предметом, целью, задач и исследовательской логике, обоснованием полученных результатов, заключением и рекомендаций.

Основные результаты исследования были обсуждены на заседании кафедры общей педагогики в АГПУ им. Х. Абояна. Результаты эксперимента обосновали эффективность модели формирования мотивов, побуждающих к творческой деятельности подростков-школьников.

**Содержание исследования** отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликованы 3 статьи.

## FARZADYAN HRIPSIME RUBEN

### THE MOTIVES INDUCING TO CREATIVE ACTIVITIES OF ADOLESCENT SCHOOLCHILDREN IN TERMS OF EDUCATION

#### SUMMARY

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 – "Theory and History of Pedagogy".

The defense of the thesis will be held in March 27, at 14<sup>00</sup>, 2014 at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Armenian State Pedagogical University. After Kh. Aboyan, address: 0010, st. Tigrana Mets 17, Yerevan.

**Relevance of research .** Modern educational system needs to educate competitive individuals who are able in terms of free market economy to create and maintain the socio - cultural values, to be oriented correctly in various industrial and social conditions. One of the main goals of educational activities is to transfer knowledge to students, form and develop cognitive, social and personal skills, educate socially active citizens, reveal their personal qualities , ensure their participation in the labor and educational activities, form and strengthen relations due to historical, national values of this nation. Today, however, it becomes a priority objective to build creative personality, aimed at engaging him/her in society life.

Creative activity helps the adolescent to perform their functions more effectively. It helps students to understand themselves, the modern world, to orientate the diverse social relations, have an idea about the political, economic, spiritual and cultural perspectives of society.

**The aim of this study** is to substantiate theoretically and apply to practice a productive model to build motives, inducing to creative activity in the secondary school.

#### **Objectives of the study .**

1. Explore the problem of building motive, inducing to creative activity of adolescents in the educational process abroad and in Armenia, to analyze the important concepts and notions of the study such as "creativity", "creative activity", "theme" "humanistic education".

2. Develop the model of building motives, inducing to creative activity of adolescents.

3. Determine the level of building motives, inducing to creative activity of adolescents, the criteria and indicators for diagnosis.

4. Prove experimentally the effectiveness of pedagogical conditions of building motives, inducing to creative activity of adolescents.

#### **Scientific novelty of the study.**

The process of building motives, inducing to creative activity of adolescents was considered from the standpoint of modern humanistic concept of education, which

contributes to the maximum building and developing self-conscious, creative person. It creates the model of building motives, inducing to creative activity of adolescents. The research develops and implements the model of building motives, inducing to creative activity of adolescents and considers and presents meaningful levels and criteria for building motives inducing to creative activity of adolescents within the concept of humanistic education.

#### **The theoretical value of the study.**

The research examines the problem of building motives, inducing to creative activity of adolescents. In the framework of humanistic paradigm it assumes that this process is based on the principles of humanization, self-organization, dialogue, integration, training and unity of creativity and empathy.

The research creates the model of building motives, inducing to creative activity of adolescents which includes cognitive, ackmeological, valeological and aesthetic components and reveals the feedback between creative activity of adolescents to build motives and ideas of their creative activity.

#### **The practical significance of the study.**

The research develops and experimentally substantiates the problem of building motives inducing to creative activity of adolescents, represents practical recommendations to conduct lessons, to apply diagnostic techniques, to contribute to a more efficient organization of creative activity of adolescents, making school-life easier and more interesting to present and perceive the phenomena to study.


#### **Exploration of the research results:**

The accuracy of the research results will provide a comprehensive analysis of the philosophical, social, psychological and educational literature and developed concepts, scientific and theoretical basis, using research methods in accordance with the subject, purpose, objectives and research logic, justification of the results, conclusions and recommendations.

The main points of the study were discussed at the sitting of the department of general pedagogy in ASPU after Kh. Abovyan.

The results of the experiment reveal the main characteristics of building motives, inducing to creative activity of adolescents. The main conclusions and tenets the research were put into practice in Giumry secondary schools №17, 40 and Axuryan secondary school №1.

**Content of the study** is reflected on the structure of the dissertation, which consists of the introduction of two chapters, conclusion, bibliography and appendices. On the topic of the dissertation are published 3 articles.

A handwritten signature in black ink, appearing to be in Armenian script, is written over a horizontal line.